ՀԱԲԵԹ ՄԱԴՈՅԱՆ
«ՄԻՏՔ» Վերլուծական Կենտրոն ՀԿ, տ.գ.թ., դոցենտ

ԻՆՉՔԱՆՈՎ ԵՆ ԿԱՏԱՐՅԱԼ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ԵՎ ՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ԵՆ ԱԶԴՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Աբստրակտ

Ընդհանրապես ընդունված է համարել, որ Մտավոր սեփականության համակարգի արդյունավետությունը խթանում է գիտատեխնիկական առաջընթացը: Արդյունաբերական սեփականության, հեղինակային իրավունքների պաշտպանվածությունը լրացուցիչ խթան են հանդիսանում գիտության ոլորտում թե արտասահմանյան և թե ներքին ներդրումների իրականացման համար: Թույլ պաշտպանության համակարգով երկրներում, գիտատեխնիկական աշխատանքների ծավալները ընդհանուր առմամբ փոքր են, այնինչ բարձր պաշտպանվածությամբ երկրներում առկա է ներդրումային ավելի բարենպաստ միջավայր:

Սակայն միշտ չէ, որ ՄՍ պահպանության համակարգը հանդես է գալիս որպես գիտատեխնիկական առաջընթացի պատճառ, որոշ դեպքերում, հատկապես զարգացող արդյունաբերական երկրներում, ՄՍ համակարգի խստացումը ստեղծում է բացասական հետևանքներ՝ առաջացնելով մենատիրություններ կարևոր ոլորտներում:

Հոդվածում ներկայացված է ՀՀ մտավոր սեփականության պահպանության համակարգը, նրա ռեժիմի խստացման դրական և բացասական հետևանքները: Իրականացված է ռեգռեսիոն վերլուծություն արդյունաբերական սեփականության ձևավորման վրա ազդող տնտեսական գործոնների բացահայտման նպատակով: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ չնայած Հայաստանում մտավոր սեփականության պահպանության համակարգը համապատասխանում է միջազգային ստանդարտներին, այնուամենայնիվ գիտահետազոտական աշխատանքների արդյունավետությունը վերջնական արդյունքի արտոնագրման տեսակետից ունի ցածր արդյունավետություն: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ միայն պետական բյուջեից գիտությանը հատկացվող ծախսերն են դրական ազդում արդյունաբերական սեփականության ձևավորման վրա, ինչը վկայում է ազգային ինովացիոն համակարգի անկատարության մասին:

Հաշվարկված է Պարկ-Ջինարտե-ի կողմից առաջարկված մտավոր սեփականության պահպանության ինդեքսը Հայաստանի համար:

Ներածություն

Մտավոր սեփականության ձևավորման և պահպանման գործուն մեխանիզմները գիտելիքահենք տնտեսության ձևավորման կարևոր նախադրյալ են: ՄՍՊ գործուն համակարգը խթանում է ներդրումները գիտահետազոտական աշխատանքներում, իսկ նրանց արդյունքների ներդրումը տնտեսության մեջ, բերում է տնտեսության գիտատար հատվածի զարգացմանը: Սակայն միշտ չէ, որ ՄՍՊ խստացված ռեժիմը բերում է տնտեսական աճի. զարգացող արդյունաբերական երկրներում այն կարող է նաև բերել հակառակ արդյունքին, ինչը հիմնականում կապված է որոշ ճյուղերում մենատիրության առաջացման հետ: Մտավոր սեփականության ձևավորման մակարդակը բնութագրվում է ՄՍ գործակալության կողմից գրանցված արտոնագրերի քանակով (արդյունաբերական սեփականության մասով): Այսօր Հայաստանում դրանց թիվը բավականին փոքր է, ինչը կարող է լինել հետևանք թե ՄՍՊ համակարգի թերզարգացվածության և թե ազգային ինովացիոն համակարգի անարդյունավետության: Սակայն անհրաժեշտ

է նշել, որ եթե նույնիսկ ՄՄ պահպանության համակարգը համապատասխանում է միջազգային չափանիշներին, այն դեռևս բավարար չէ գիտատեխնիկական առաջընթացն ապահովելու համար: Ըստ այդմ անհրաժեշտություն է առաջանում գնահատել մի շարք կարևոր տնտեսական գործոնների (գիտատեխնիկական աշխատողների քանակ, գիտության վրա կատարվող ծախսեր և այլն) ազդեցության չափը արդյունաբերական սեփականության ձևավորման վրա:

Մտավոր սեփականության ձևավորման և նրա պաշտպանության անհրաժեշտությունը գիտելիքահենք տնտեսություն ձևավորելու գործում

Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման, գիտելիքահենք տնտեսության ստեղծման համար Հայաստանին այսօր անհրաժեշտ է իրականացնել մի շարք ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումները: Առաջին հերթին անհրաժեշտ է ստեղծել գիտատեխնիկական առաջընթացի ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ, ապահովել դրանց անխափան աշխատանքը:

Այս տեսակետից առավել քան կարևորվում է մտավոր սեփականության պահպանության գործուն համակարգի ստեղծումը: Արդյունաբերությունում գիտահետազոտական աշխատանքների իրականացման վերջնական փուլը դրանց արդյունքների սեփականության իրավական ամրապնդումն է՝ արտոնագրերի տեսքով: Գիտատեխնիկական առաջընթացը ինքնին պահանջում է մեծ ֆինանսական ներդրումներ և բավականին ռիսկային գործընթաց է: Սակայն ներդրողները այստեղ հույս ունեն ստանալ մեծ շահույթներ, եթե ԳՀԱ շնորհիվ հնարավոր լինի ստեղծել շուկայի համար նոր արտադրանք, իսկ եթե ԳՀԱ վերջնական արդյունքը հնարավոր չէ ամրապնդել այն իրականացնողի օգտին, ապա ներդրումները ԳՀԱ-ում դառնում են ոչ շահութաբեր: Եվ, վերջապես, յուրաքանչյուր դեմոկրատական երկրում սեփականության իրավունքը առաջնային արժեքներից է, հետևաբար և կարևորվում է նրա պաշտպանության մեխանիզմների առկայությունը:

Չնայած մեր երկրում արդեն վաղուց գործում է մտավոր սեփականության պաշտպանության համակարգ, այնուամենայնիվ այդ իրավունքները մեզ մոտ բավականին թույլ են պաշտպանվում, դա առավել քան լավ երևում է ծրագրային ապահովման տեղական շուկայում: Միջազգային հեղինակավոր BSA (Business Software Alliance) կազմակերպության 2007 թ. զեկույցում բերված է առավելապես «պիրատացված» երկրների ցուցակը, որի առաջին տեղում Հայաստանն է: Մեզ մոտ ծրագրահենության մակարդակը կազմում է առավել քան 95% (համաշխարհային միջին մակարդակը 35% է)[1], այսինքն շուկայում հայտնվող ծրագրային ապահովման փաթեթների 95% կեղծ են (արտոնագրված չեն արտադրության մայր թողարկողի կողմից): Չնայած ծրագրահենության շատ բարձր աստիճանի, դրանից համաշխարհային տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին հասցված վնասները բավականին փոքր են՝ ընդհամենը 8 մլն ԱՄՆ դոլար. համեմատության համար նշենք, որ ԱՄՆ-ում առկա է ծրագրահենության ամենացածր մակարդակը՝21%, այնինչ վնասները կազմում են 7,289 մլրդ $ (որը ամենաբարձր ցուցանիշն է)[2]: Երևի հենց այս պատճառով էլ Հայաստանում պայքարը ծրագրահենության դեմ բավականին թույլ է: Նման պայքարի ֆինասավորումը կարող է և չարդարացնել ծրագրահեն արտադրանքի շուկայից դուրս մղելուց առաջացող շահույթը՝ համաշխարհային SS ընկերությունների համար:

Իրականում փորձը ցույց է տալիս, որ ոչ միշտ է մտավոր սեփականության պաշտպանության խստացված ռեժիմը բերում տնտեսական աճի, մանավանդ զարգացող երկրների համար: Այնուամենայնիվ ներկայացնենք մտավոր սեփականության պաշտպանության խիստ ռեժիմների դրական և բացասական հետևանքները.

---

[1] Fourth Annual BSA and IDC Global Software Piracy Study 2006 p. 4:

[2] Նույն տեղում, p. 7:

Դրական

Գիտատեխնիկական առաջընթաց – յուրաքանչյուր նոր գիտական հայտնագործություն գրեթե միշտ հիմնվում է նրան նախորդող գիտական հաջողությունների վրա: Այսինքն ԳՏԱ-ն ունի շարունակական և կուտակային բնույթ: ՄՄՊ գործուն համակարգը ստիպում է գյուտարարներին գրանցել, այսինքն հանրությանը ներկայացնել իրենց հայտանգործությունները՝ առանց վախենալու ուրիշների կողմից այն չարամտորեն օգտագործելուց: Գիտական տեղեկատվության մատչելիությունն էլ իր հերթին արագացնում է գիտատեխնիկական առաջընթացի տեմպերը:

Օտարերկրյա ներդրումներ – UNCTAD-ի 2006թ. «Համաշխարհային ներդրումային զեկույցը» մատնանշում է այն միտումը, որ աշխարհի խոշորագույն վերազգային կորպորացիաները այսօր տեղափոխում են իրենց գիտահետազոտական ստորաբաժանումները զարգացած երկրներից դեպի զարգացող երկրներ: Նույն զեկույցը ցույց է տալիս, որ գիտահետազոտական ոլորտում ուղղակի օտարերկրյա ներդրումներ իրականացնելիս, ՎԿ առաջին հերթին ուշադրություն են դարձնում այդ երկրում առկա սոցիալական, քաղաքական վիճակին և ինովացիոն գործընթացների իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությանը, որոնցից առաջնայինը մտավոր սեփականության պահպանության համակարգն է: Ըստ այդմ ՄՄՊ գործուն համակարգը ուղղված է խթանելու ՕՈՒՆ-երը: Այսինքն, չնայած Հայաստանում ծրագրահենությունից ստացվող վնասները բավականին փոքր են, այնուամենայնիվ այն ստեղծում է ոչ բարենպաստ ներդրումային մթնոլորտ ՕՈՒՆ-երի համար:

Տնտեսական աճ – ՄՄՊ գործուն համակարգերը խթանում են ինովացիոն ակտիվությունը երկրի տարածքում, հատկապես զարգացնելով նրա գիտատար ճյուղերը: Microsoft ընկերության հայաստանյան մասնաճյուղի հաշվարկներով, եթե Հայաստանում ծրագրահենության մակարդակը նվազի 10%-ով, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը 3 անգամ արագ կզարգանա, կստեղծվի լրացուցիչ 2-3 հազար աշխատատեղ[1]:

Բացասական

Ընդհանուր առմամբ ՄՄՊ համակարգի խստացումը բերում է դրական տնտեսական հետևանքների տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, սակայն այս փաստը միշտ չէ, որ ճիշտ է զարգացող երկրների համար: ՄՄՊ խիստ համակարգը ստեղծում է մենաշնորհային դիրք տնտեսության մի շարք կարևոր ճյուղերում, ինչը Հայաստանի նման զարգացող երկրների համար կարող է ունենալ լուրջ բացասական հետևանքներ, մասնավորապես նման խնդիր կառաջանա ծրագրային ապահովման շուկայում: Եթե հայկական այս շուկայում վերանան բոլոր ծրագրահեն ապրանքները, ապա տնտեսության մյուս ճյուղերը (նաև տնային տնտեսությունները) ստիպված կլինեն օգտվել ծրագրերի արտոնագրված տարբերակներից, ինչը այսօրվա մեր հասարակության համար մեծամասամբ հասանելի չէ:

Հայտնի է, որ գիտատեխնիկական առաջընթացի կենտրոնն այսօր զարգացած արդյունաբերական երկներն են: Այստեղ ստեղծված ԳՏԱ արդյունքները, արտոնագրված տեսքով հասանելի են դառնում մնացած աշխարհին հայտնագործումից տարիներ հետո, իսկ անօրինական ճանապարհով նրանք կարող են մուտք գործել զարգացող երկրներ շատ ավելի շուտ, այսինքն ավելի ցածր գնով: Հետևաբար ՄՄՊ խիստ մեխանզիմները զրկում են զարգացող երկների ոչ այնքան հարուստ ձեռնարկություններին, բաժին ստանալ համաշխարհային գիտության զարգացման արդյունքներից:

Մտավոր սեփականության պահպանության համակարգը Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության պաշտպանության համակարգը ձևավորվել է ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության[2] (1992 թ.) և

---

[1] Ինը կարծիք մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության վերաբերյալ, ԻՏՀՄ, Երևան, 2007, էջ 10:
[2] ՀՀ կառավարության 1992թ. հունվարի 26-ի No 54 որոշում:

Հեղինակային իրավունքի ազգային վարչության[1] (1993թ.) ստեղծմամբ: 2002թ. այս երկու կառույցները միավորվել են ստեղծելով ՀՀ մտավոր սեփականության պաշտպանության ազգային գործակալություն[2], որը գործում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմում՝ որպես առանձնացված ստորաբաժանում:

Հայաստանում մտավոր սեփականության պաշտպանության իրավական դաշտը ձևավորվում է հետևյալ օրենքներով՝ ՀՀ օրենքները արտոնագրերի մասին (1993թ., 1999թ., 2004թ.), ֆիրմային անվանումների մասին (1999թ.), ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքային ծագման տեղանունների մասին (2000թ.), ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության մասին (1998թ.), հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին (2006 թ.) և մի շարք այլ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով:

Բացի վերը նշվածներից, այս ոլորտում Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է թվով 17 միջազգային պայմանագրերի և կազմակերպությունների, մասնավորապես արդյունաբերական սեփականության պաշտպանության Փարիզյան կոնվենցիան (միացել է 1993թ.), Եվրասիական արտոնագրային կազմակերպություն (միացել է 1996թ.), արտոնագրային համագործակցության մասին (միացել է PCT 1991) և այլն:

Մտավոր սեփականության ձևավորման վրա ազդող գործոնները

1995-2006 թթ. ՀՀ ՄՍ գործակալություն է ներկայացվել արդյունաբերական սեփականության արտոնագրի 2379 հայտ[3], տրամադրվել են արտոնագրեր՝ 2034: Թե՛ ներկայացված հայտերի և թե՛ տրված արտոնագրերի թվաքանակում զգալի մաս են կազմում գյուտերը, համապատասխանաբար՝ 88 և 86%:

Գծանկար 1

ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից տրված արտոնագրերի քանակը՝ 1995-2006 թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ՄՍ գործակալություն – www.aipa.am:

Ընդհանրապես մտավոր սեփականության ձևավորման չափման համար (համենայն դեպս այն մասով, որը վերաբերվում է արդյունաբերական սեփականությանը) ամենահարմար ցուցանիշը գրանցված արտոնագրերի քանակն է: Վերջին հաշվով գիտահետազոտական աշխատանքների

[1] ՀՀ կառավարության 1993թ. դեկտեմբերի 27-ի No 645 որոշում:
[2] ՀՀ կառավարության 2002թ. մարտի 6-ի No197 որոշում:
[3] Գյուտեր, արդյունաբերական նմուշներ, օգտակար մոդելներ:

հիմնական նպատակը նորի ստեղծումն է, որը հանդես է գալիս գյուտերի, արդյունաբերական նմուշների կամ օգտակար մոդելների տեսքով: Եթե գիտահետազոտական աշխատանքներն ավարտվում են հաջողությամբ, այսինքն ստացվում է ինովացիոն արդյունք, բնական, որ հաջորդ քայլով այդ հայտնագործության սեփականատերը ամրապնդում է իր սեփականության իրավունքը հայտնագործության նկատմամբ:

Հայաստանում արդյունաբերական սեփականության ձևավորման վրա ազդող գործոնները գնահատելու համար առաջարկվում է օգտագործել հետևյալ գծային ռեգրեսիոն մոդելը

$$PT = \alpha_0 + \alpha_1 RD + \alpha_2 SB + \alpha_3 RDC + \alpha_4 RDL$$

որտեղ՝

PT - տրված արտոնագրերի ընդհանուր քանակն է,

SB - պետական բյուջեից գիտահետազոտական աշխատանքներին հատկացված գումարը (մլն. դրամ շուկայական գներով),

RDC - գիտահետազոտական աշխատանքներով զբաղվող կազմակերպությունների քանակը,

RD - գիտահետազոտական աշխատանքների ծավալները (մլն դրամ, շուկայական գներով),

RDL - գիտահետազոտական աշխատանքներով զբաղվող կազմակերպությունների աշխատողների քանակը (հետազոտողներ և տեխնիկներ): Հետազոտության համար առաջարկվում է օգտագործել 1995-2006 թթ. ՀՀ ԱՎԾ և մտավոր սեփականության գործակալության վիճակագրության տվյալները:

Մոդելի գնահատման ընթացքում պարզվել է, որ առկա է ավտոռեգրեսիոն գործընթաց ($DW = 3.459$), հետևաբար մոդելի պարամետրերի գնահատման համար, օգտագործվել է Կոխրեյն-Օրկատտի մոտեցումը: Ստացվել են հետևյալ արդյունքները.

$$PT = 69.86 - 0,53RD + 0,11SB + 6,456RDC - 0,091RDL,\ R^2_{adj} = 0,968,\ DW = 2,56$$

(1.83) (-7.1) (6.4) (8,7) (-11.02) [1]

Ըստ տրամաբանության, ընտրված բոլոր բացատրող փոփոխականները պետք է դրական ազդեին արտոնագրման գործընթացի վրա, սակայն դրական գործակիցներ ունեն միայն պետական բյուջեի ծախսերը և ԳՀԱ իրականացնող ձեռնարկությունների քանակը, այնինչ ԳՀ ծախսերի ընդհանուր ծավալն ու գիտական աշխատողների թվաքանակը չեն նպաստում արտոնագրերի քանակի աճին: ՊԲ ծախսերի արդյունավետությունը ապացուցվում է նաև այն փաստով, որ այսօր արդյունաբերական նմուշի արտոնագրերի զգալի մասը բաժին է ընկնում պետական գիտահետազոտական և ուսումնական հաստատություններին, այնպիսիք, ինչպիսիք են Երևանի ագրարային համալսարանը, պոլիտեխնիկ համալսարանը և այլն, այնինչ մասնավոր հատվածում, փաստորեն ԳՀԱ չեն բերում արտոնագրման: Ընդ որում, SB փոփոխականի գործակիցը ցույց է տալիս, որ միջինում մեկ արտոնագիր ստանալու համար, անհրաժեշտ է 1 մլն դրամ:

Կարծում ենք, որ արտոնագրերի քանակի վրա գիտահետազոտական ծախսերի և գիտական աշխատողների քանակների բացասական ազդեցությունը, առաջին հերթին արդյունք է ազգային ինովացիոն համակարգի գործունեության ոչ բավարար արդյունավետության:

Մտավոր սեփականության պահպանության ինդեքս

Վալտեր Պարկի և Խուան Կարլոս Ջինարտե-ի[2] կողմից 1997թ. ներմուծվել է մտավոր սեփականության պահպանության ինդեքսի գաղափարը, որը թույլ է տալիս գնահատել ՄՍՊ աստիճանը յուրաքանչյուր երկրի համար: Ինդեքսը բաղկացած է 5 դասերից, որոնց համար տրվում են առանձին գնահատականներ, կախված այս կամ այն երևույթի առկայությունից: Ըստ

---

[1] Բացի ազատ անդամից, բոլոր գործակիցները նշանակալի են $\alpha = 0,01$ աստիճանով:

[2] Walter J. Park and Juan Carlos Ginarte, Intellectual property Rights and economic growth, Contemporary economic policy, XV July 1997, pp. 51-61

այդմ երևույթի առկայությունը գնահատվում 1, բացակայությունը 0: Յուրաքանչյուր դասի համար հաշվարկվում է միջին գնահատական, այնուհետև արդյունքները միջինացվում են ըստ բոլոր 5 դասերի: Ինդեքսի արժեքը տատանվում է 0-5 միջակայքում, 5 գնահատականը տրվում է այն երկրներին, որտեղ առկա է ՄՍՊ ամենաուժեղ համակարգը, 0-համապատասխանաբար ամենաթույլը:

Աղյուսակ 1

Մտավոր սեփականության պահպանության ինդեքսի կառուցվածքը ՀՀ համար

Դաս	Ցուցանիշ			Միջին գնահատական
A Ծածկույթ	Օգտակար մոդելի արտոնագրում	Դեղագործական արտադրանքի արտոնագրում	Քիմիական արտադրանքի արտոնագրում	
	1	1	1	1
B Անդամակցությունը միջազգային համաձայնագրերին	Արդյունաբերական սեփականության փարիզյան կոնվենցիա (1883)	International Union for the Protection of New Varieties of Plants (UPOV)	Արտոնագրային համաձայնության մասին պայմանագիր (PCT)	
	1	0	1	0,66 (6)
C Վնասների փոխհատուցում	Արտոնագրի պարտադիր օգտագործման պայման	Հարկադրական լիցենզիա	Արտոնագրի գործունեության դադարեցում	
	1	1	1	1
D Հարկադրական մեխանիզմներ	Նախնական դատական արգելք	Կեղծարարության դեմ պայքար	Ապացուցման պարտականության փոխանցում իրավախախտին	
	1	1	1	1
E Արտոնագրային նվազագույն ժամկետը	Արտոնագրի գործողության նվազագույն ժամկետը			
	10			10/20=0.5
Ընդհամենը				4.16

Աղբյուրը՝ ՀՀ օրենքները արտոնագրերի մասին, հեղինակային և հարակից իրավունքների մասին, մաքսային օրենսգիրք (Մաս 14), քրեական օրենսգիրք:

Ինդեքսի բավականին բարձր արժեքն արդեն իսկ խոսում է Հայաստանում մտավոր սեփականության պահպանության առաջադեմ օրենսդրության և համակարգի առկայության մասին: Օրենսդրական վերջին բարեփոխումները ենթադրում են արտոնագրային նվազագույն ժամկետի սահմանում՝ 20 տարի: Այս փոփոխություններից հետո ինդեքսի արժեքը կկազմի 4.66: Նշենք նաև, որ Պարկ և Ջինարտեի աշխատությունում ինդեքսի միջին մակարդակը կազմել է 2.46, առավելագույնը՝ 4.52[1]:

[1] Juan C. Ginarte, Walter G. Park, Determinants of patent rights: A cross national study, Research Policy 26 (1997) pp. 283-301

Ամփոփում

Գիտահետազոտական աշխատանքների իրականացման, ազգային ինովացիոն համակարգի գործունեության արդյունավետության կարևոր չափանիշներից է գրանցվող արտոնագրերի քանակը: Արտոնագրերի մեծ քանակը վկայում են այն մասին, որ գիտահետազոտական աշխատանքները ավարտվում են հաջողությամբ, ստեղծվում է հետագայում արդյունաբերության մեջ ներդրման համար պիտանի արդյունք:

Իրականացված ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ մի շարք կարևոր ցուցանիշներ, ինչպիսիքն են գիտահետազոտական կազմակերպությունների գիտական կադրերի թիվը, ԳՀ ընդհանուր ծախսերը, որոնք պետք է մեծ ազդեցություն ունենային արդյունաբերական սեփականության ձևավորման վրա, արդյունավետ չեն: Սա խոսում է առաջին հերթին ազգային ինովացիոն համակարգի գործունեության անարդյունավետության մասին: Մյուս կողմից մտավոր սեփականության պահպանության ինդեքսի բարձր արժեքը ցույց է տալիս, որ այս ոլորտում մեր երկրում ամեն ինչ նորմալ է, և օրենսդրական դաշտն ինքնին չի կարող հանդես գալ որպես արդյունաբերական սեփականության ձևավորմանը խանգարող հանգամանք:

ՇՈՂԵՐ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանին անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ՀՊՏՀ ասպիրանտ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ՎՐԱ

Համաշխարհային ապրանքային շուկաների բարձր հագեցվածության և նույնիսկ գերհագեցվածության պայմաններում, պահանջարկի նկատմամբ առաջարկի գերակայությամբ, դաժան պայքար է մղվում սպառողի նախասիրությունների համար: Գնորդի միևնույն պահանջմունքը կարող են բավարարել բազմաթիվ ապրանքներ: Նման իրավիճակում սպառողը նախապատվությունը տալիս է առավել մրցունակ ապրանքին:

Ժամանակակից աշխարհում գրեթե բոլոր ընկերությունները բախվում են մրցակիցների կողմից առաջարկվող, սպառողների նույն կարիքները բավարարող նմանատիպ արտադրանքի կամ ծառայությունների մրցակցությանը: Այս պարագայում կարևոր դերակատարում ունի պետությունը, որի հիմնական խնդիրն ընկերությունների համար կանխատեսելի միջավայրի ապահովումն է, որը թույլ կտա նրանց ազատ մրցակցել հնարավորություն տվող շուկաներում: Մրցակցությանը դիմակայելու համար ընկերություններին անհրաժեշտ է խորին ուսումնասիրել շուկան, սպառողների վարքագիծը, մտածելակերպը, ինչպես նաև այդ վարքագծի վրա ազդող գործոնները:

Ուղղակի մարքեթինգի տեսանկյունից անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել մշակութային գործոններին: Ժամանակակից ճանաչված հետազոտող Հոֆստենդը գրում է, որ ընդհանուր մշակույթն այս կամ այն ազգի կամ էթնիկական ամբողջության, խմբի ապրելակերպն է[1]: Նա նշում է նաև, որ մշակույթը մտքի կոլեկտիվ ծրագրավորումն է, որը տարբերում է մի խմբի կամ կատեգորիայի անդամներին մյուսներից[2]:

---

[1] Geert Hofstend, Cultural Consequences: International Differences in Work-Related Values. Beverly Hills, 1980.

[2] "Global marketing managment", Masaaki Kotabe, Kristian Helsen, John Wiley & Sons, 1998, p 83.